ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2025թ. սեպտեմբերի 17-ի N 325-Ա

«ԱՊԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱՎԱԼԱԹԵՐԹԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՐԱՏԱՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԳՆՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է՝ որոշում եմ

1. ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի 2025 թվականի կարիքների համար «Ապարանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի/այսուհետ ՊՈԱԿ/ տանիքի վերանորոգման աշխատանքները /այսուհետ Աշխատանքներ/ կազմակերպել ՊՈԱԿ-ի կողմից կազմված և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն ներկայացված ծավալաթերթով՝ մրցույթի հրավերի մեջ նշելով, որ զուգահեռ կկազմակերպվի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայության արտապատվիրակման գնման գործընթաց: Աշխատանքների իրականացման գնման գործընթացի հայտերի ներկայացման համար «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված մրցույթի ժամկետի կիրառման անհնարինության պատճառով գնման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա:

2. ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Աշխատանքների իրականացման համար հրատապ կազմակերպել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայության պատվիրակման գնման և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պատվիրման գնման ընթացակարգեր:

9/17/2025

X

VERIFIED OCSP 9/17/2025 15:25:27 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ